

## ՍԴՀԿ Յայտարարությունը. «Բուն Ընտրական Գործընթացը Ստուերել է Հանրաքուէի Ողջ Իմաստն ու Էութիւնը

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Հայաստանի վարչութիւնը Դեկտեմբեր 6-ի հանրաքուէին առթիւ իր հրապարակած յայտարարութեան մէջ կը յայտնէ որ, բուն ընտրական գործընթացը՝ որակապէս եւ առանձնապէս չէր տարբերեր նախկին ընտրութիւններէն, այսպիսով ստուերելով Սահմանադրական հանրաքուէի ամբողջ իմաստն ու էութիւնը:

ՍԴՀԿ յայտարարութեան մէջ մասնաւորապէս ըսուած է. –

1. Քարոզարշար չվերածուեց համահայաստանեան իրականութեան, որովհետեւ քաղաքացիներին մի ստուար հատուած ոչ միայն հետաքրքրուած չէր Սահմանադրական բարեփոխումներով, այլ նաեւ ըստ պատշանի տեղեկացուած չէր:

2. Բուն ընտրական գործընթացը որակապէս առանձնապէս չէր տարբերուում նախկինում տեղի ունեցող ընտրութիւններից՝ այսկերպ ստուերելով Սահմանադրական հանրաքուէի ողջ իմաստն ու էութիւնը:

3. ՍԴՀԿ-ն ինչպէս նախկինում, այժմ էլ գտնուում է, որ խորհրդարանական կառավարման համակարգն այլընտրանք չունի, եւ փոփոխուած Սահմանադրութիւնն ընդունում իբրեւ համակարգային փոփոխութիւնների լուսադոյն հնարաւորութիւն:

4. ՍԴՀԿ-ն վստահ է, որ այս գործընթացում չպէտք է փնտոնել յաղթողներ եւ պարտուողներ. անհրաժեշտ է գտնել լուծումներ՝ երկրում անցնցում եւ համերաշխ մթնոլորտ ապահովելու համար, որի հիմնական նախնականներն պէտք է դառնայ գործող իշխանութիւնը:


5. Ինչպէս նախկինում, այժմ էլ ՍԴՀԿ-ն վստահ է, որ փոփոխուած Սահմանադրութիւնը կարող է երկրում որակապէս նոր իրավիճակ ստեղծել միայն եւ միայն իշխանութիւնների քաղաքական կամքի պարագայում, որի հիմնական շնչատադրումը պէտք է լինի օլիգարխիան իշխանութիւնից տարանջատելն ու երկրում սոցիալական մեծ բարեփոխումների իրականացումը»:

ՍԴՀԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

## Հրապարակուած Պաշտօնական Արդիւնքներուն Համաձայն Հայաստանի Նոր Սահմանադրութեան «Այո» Քուէարկած Է Ընտրողներու 63 Տոկոսը

Դեկտեմբեր 6-ին, հայաստանի մէջ տեղի ունեցաւ նախագահ Սերժ սարգսեանի առաջարկած Սահմանադրական փոփոխութիւններու հանրաքուէն: Ըստ Հայաստանի Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովի (ԿԸՅ) հրապարակած նախնական արդիւնքներուն, սահմանադրական փոփոխութիւնները ընդունուած են: Ընտրողներու 63,35 տոկոսը քուէարկած է «այո», իսկ «ոչ»՝ 32,35 տոկոսը:

ԿԸՅ նախագահ Տիգրան Մուկուչեանի հրապարակած արդիւնքներով, ընտրութիւններուն մասնակցած է ժողովուրդի 50,3 տոկոսը: «Այո» քուէարկած է 825 հազար 851 ընտրող, «ոչ»՝ 421 հազար 600 ընտրող:



Հայաստանի քաղաքացիներ ընտրատեղամասերէն մէկուն մէջ կը մասնակցին քուէարկութեան

«Այո»-ն յաղթած է հանրապետութեան բոլոր մարզերուն եւ մայրաքաղաք Երեւանի մէջ:

Նախագահ Սերժ Սարգսեան Դեկտեմբեր 7-ի երեկոյեան իր նստավայրէն ներս հիւրընկալելով բազմաթիւ պաշտօնատար անձիք, հասարակական եւ քաղաքական գործիչներ ու անոնց առջեւ ելոյթ ունենալով, արդէն իրականութիւն համարեց կառավարման խորհրդարանական համակարգը՝ Հայաստանի

տանի Հանրապետութեան համար:

«Դա նշանակում է ուժեղ իշխանութեան եւ ուժեղ ընդդիմութեան առկայութիւն, քաղաքական կուսակցութիւնների դերի բարձրացում, դրանց զարգացման նոր հնարաւորութիւնների ընձեռում: Դա նշանակում է նաեւ զարգացած կուսակցական համակարգ, որը ցանկացած ժողովրդավարական պետութեան կարեւորագոյն նախա-

պայմաններից մէկն է», ըսաւ ան:

Ընտրութիւններու գործընթացին եւ արդիւնքներուն վերաբերեալ գնահատանքները տարբեր էին: «Ոչ»-ի միասնական շտաբի ղեկավար Լեւոն Զուրաբեան նոյն գիշեր յայտարարեց «ծանրագոյն կեղծիքներու» եւ մօտ կէս միլիոն ձայն կեղծուելու մասին:

Զուրաբեանի այս յայտարարութիւնները Տիգրան Մուկուչեանի կողմէ նկատուեցան որպէս քաղաքական գնահատականներ:

«Ես չգիտեմ դա ինչ հիմքով է արուած կամ ինչ դատողութիւններ են արուած: Տարաբնոյթ գնահատականներ կարող են հնչել,

Շաք-ը Էջ 5

## Հայ Ամերիկեան Խորհուրդի Տօնական Ընդունելութիւնը

Հայ Ամերիկեան Խորհուրդի (ՀԱԽ) Սան Կապրիէլ Հովիտի մասնաճիւղը կազմակերպած էր տօնական օրերու նախօրեակի իր տարեկան «Բաց դռներու» ընդունելութիւնը, որ տեղի ունեցաւ Դեկտեմբեր 4-ի երեկոյեան, Փաստօրինայի ՍԴՀԿ կեդրոնէն ներս:



Ընդունելութեան ներկայ եղան Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան անդամ, գոնկորէսական ծուտի Զու, Փաստօրինայի Քաղաքապետական Խորհուրդի անդամ՝ Թայրոն Համբլըն, Փաստօրինայի Ընկերային Ցարաբերութեանց Խորհուրդի անդամներէն Նէթ Նէստըր, Քալիֆորնիոյ Նահանգային Խորհրդարանի անդամ Քրիս Հոլտընի ներկայացուցիչ Կարօ Մանճիքեան եւ ուրիշներ:

ՀԱԽ-ի ատենապետ Սեւակ Խաչատուրեան ներկայացուց գոնկորէսական Զուին, որ իր խօսքին մէջ վերահաստատեց Հայ համայնքի կողքին ըլլալու իր յանձնարարութիւնը, խոստանալով շարունակել պաշտպանել հայկական հարցերն ու մտահոգութիւնները տեղական ու միջազգային գետնի վրայ:

Ապա, ծուտի Զու ՀԱԽ-ի

Գոնկորէսական ծուտի Զու պատուոյ գիր կը յանձնէ Վահէ Աջապահեանին: Կողքին ՀԱԽ-ի ատենապետ Սեւակ Խաչատուրեան

վարչութեան նախկին անդամ Վահէ Աջապահեանին յանձնեց Գոնկորէսական Պատուոյ Գիր, անոր ունեցած երկարամեայ ծառայութիւններուն եւ առ ի գնահատանք Հայ Մարմնամարզական Միութեան գծով երիտասարդութեան հետ կատարած աշխատանքին համար:

Շնորհակալութեան իր խօսքին մէջ Ընկ. Աջապահեան իր երախտագիտութիւնը յայտնեց այս պատիւին համար:

## Եւրոպական Միութիւնը Ազդարարեց Հայաստանի Հետ Նոր Բանակցութիւններու մեկնարկը

Պաշտօնական Պրիւքսէլը ազդարարեց Հայաստանի եւ Եւրոպական Միութեան միջեւ նոր իրաւական փաստաթուղթի շուրջ բանակցութիւններու պաշտօնական մեկնարկը:

Եւրամիութեան դիւանագիտութեան եւ անվտանգութեան հարցերով բարձր ներկայացուցիչ Ֆետերիկա Մոգերինի, ընդունելով Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեանին, յայտարարեց, թէ բանակցային նոր փուլի մեկնարկը թոյլ կու տայ փակել անորոշութեան էջը, որը ի յայտ եկաւ 2013 թուականէն յետոյ:

«Հայաստանի եւ Եւրամիութեան միջեւ 3,5 տարուայ բարդ աշխատանքը այսպիսով չի վատնուիր: Այն կը դառնայ մեր նոր յարաբերութիւններու հիմքը», յայտարարեց Մոգերինին:



## Հանրաքուլի Գրեթե 100 Տոկոսանոց Արդիւնքը Քաղաքական ճգնաժամ

**ՄՈՒՍԱ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ**

**Կենտրոնական ընտրական  
յանձնաժողովը ամփոփեց սահմա-  
նադրական փոփոխութիւնների  
նախնական արդիւնքները եւ ար-  
ձանագրեց «Այո»-ի յաղթանակը:**

Սրան, իհարկէ, քէներն էին կասկածուած: Կասկածուած ոչ ալն իմաստով, որ համոզուած էին հասարակութեան դրական տրամադրուածութեան հարցում. կասկած էր հարուցում ալն, որ եթէ իշխանութիւնները մտադրուել էին անցկացնել «Այո»-ն, ապա իրականացնելու էին իրենց մտադրութիւնը, քանի որ կաշիւ դրանք նպատակով դրելէ բոլոր գործօնները, որոնցից զլիաւորը, իհարկէ, հասարակական ապատիան (անտարբեր) է:

Դրան գումարուում էր եւ այն, որ հանրաքուէն ընտրութիւնն էր, ապահին՝ ընտրութիւնն էր ուժեղի եւ անմեղի միջեւ, որը միշտ առանձնապատկուծիւններին էլնելով՝ ըստ էութեան կ'օգնէր հասարակութեան ապագայի (անտարբեր) վիճակը մի փոքր յաղթահարել: Մնացեալ առումներով իշխանութիւնները գործի դրեցին իրենց ողջ գիշանոցը, եւ ընտրակեղծարար մեքենան հերթական անգամ «խիտեց» իր ուզած թիւը:

Մենք կարող ենք ամենակոշտ բնորոշումները տալ այս երեւոյթին, ընտրակեղծարարներին, իշխանութեանը, սակայն ակնյայտ է որ արդէն քսան տարի եւ աւելի շարունակուող այս ցիկլում այդ գործօնը այլեւս խիստ անբաւարար է: Որովհետեւ արդէն առկայ է հարցը՝ լաւ, իսկ չետո՞յ: Այսինքն՝ չետոյ հասարակութիւնը ունա՞կ է գտնել ընտրակեղծարար մեքենայի ընթացքը արգելակելու եւ Հայաստանում օրինական ընտրութեան, օրինական քուէարկութեան մեխանիզմ հաստատելու տարբերակը, հնարաւորութիւնը, ծանապարհը, թէ՛ հասարակութիւնն ունակ է անընդհատ կրկնել իշխանութեան մեքենայի կեղծիքից չետոյ տրուող կոշտ բնորոշումները միայն՝ այդպիսով ընդամէնը թեթեւացնելով վիրաւորուած հոգին:

Համապետական քուէարկութիւնները Հայաստանում վերածուել են հասարակութեան հիւժման, բարոյալքման մի ակտի, եւ այդ քուէարկութիւնների արդիւնքում իշխանութիւնները կրկնակի յաղթանակ են տանում՝ մէկը այն, որ նրանք «խփում» են թուային ինդիքը, միւսն այն, որ բարոյալքման ամէն ակտիք յետոյ իշխանութիւնը եւս մէկ քայլ է անում դէպի հասարակութեան լիակատար կառավարելիութիւն:

Սա է գլխավոր խնդիրը, եւ այստեղ է, որ հասարակութիւնը պէտք է կեդրոնացնի իր ուշադրութիւնը, իր ջանքերը: Բայց ինչպէ՞ս: Դա պէտք է անեն հասարակական առաջատար խմբերը՝ քաղաքական կամ քաղաքացիական, որոնք պէտք է ձեւակերպեն հասարակական շահերն ու այդպիսով ըստ էութեան ապահովեն հանրաքին դիմադրողունակութեան մեխանիզմի աշխատանքը, նախ եւ առաջ իհարկէ՝ վերականգնումը:

Լստ էլութեան, սա է զլիաւոր  
հարցը, որ առաջանում է հերթա-  
կան համապետական քուէարկու-  
թիւնից յետոյ: Այսինքն՝ ոչ թէ  
առաջանում է, այլ կրկնում, հեր-  
թական անգամ հնչում բարձրա-  
ձայն: Եւ այս հարցի ու քուէար-  
կութեան ֆոնին ըստ էութեան  
առաւել քան տարօրինակ են դառ-  
նում մասսաների յեղափոխական  
շարժման վերաբերեալ կոչերը, որ  
հնչում էին հանրաքուէից առաջ,  
հանրաքուէի ընթացքում եւ հան-  
րաքուէից յետոյ:

Յեղափոխական պոտենցիալի պայմաններում իշխանությունը ոչ թէ թիւ պետք է «խփի», այլ պետք է թուի համար մարդկանց խփի բառի բուն իմաստով: Եթէ իշխանությունները կարողանում են թիւ «խփել», դա նշանակում է, որ յեղափոխական պոտենցիալ չկայ, եւ այդ պայմաններում, մեղմ սասած, ինքնախաբէություն կամ մոլորություն է մարդկանց հետ յարաբերուել յեղափոխական կոչերով՝ առանց խորամուխ լինելու իրականության բազում նրբերանգնների մէջ ու հասանալու, թէ ինչու չկայ այդ յեղափոխական պոտենցիալը, թէ ինչու ա՛յն չի արտայայտուում, թէ ինչու է հանրային դիմադրողունակությունը նուազել:

Սահմանադրական  
հանրաքուէն  
Հայաստանում  
արտայայտեց  
քաղաքական  
ճգնաժամը  
իր ողջ խորուրթեամբ

ուէն Հայաստանում արտայայտեց քաղաքական ճգնաժամը իր ողջ խորուրթեամբ: Ճգնաժամը այն է, երբ քաղաքական ուժերը միմեանց հետ չեն կարողանում որեւէ բան պայմանաւորուել: Ճգնաժամը այն է, երբ հասարակութիւնը զրկուած լինելով իր շահերն արտայայտող իշխանութիւնից, կորցրած լինելով իր շահերն արտայայտող իշխանութեան ձեւաւորման հնարաւորութիւնը՝ ըստ հոլթեան զրկուած է նաեւ իր շահերը սպասարկող ընդդիմութիւնից: Սա է քաղաքական ճգնաժամը, եւ սա է սահմանադրական հանրաքուէի արդիւնքի ամենաիրական ցուցիչը՝ անկախ «այո»-ի եւ «ոչ»-ի ստացած տոկոսներից:

Սա Հայաստանում կը շարունակուի այնքան՝ անկախ որեւէ Սահմանադրութիւնից կամ կառավարման մօղելից, որքան կը շարունակուի իրերի այս դրութիւնը, եւ չի ձեւաւորուի նոր ընդդիմութիւն, որը հասարակութեան հետ կ'աշխատի նոր մեթոդաբանութեամբ՝ հնարաւորինս լիարժէք արտօրոշելով իրավիճակի եւ հասարակութեանը մեծ պաթոսի փոխարէն՝ կ'առաջարկի թէկուզ փոքր լուծումներ:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

# ԻՆՇ ՍԿԱՍԵԼ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆՈՒԷԱ

## ՀԱՅԿԱԶՆ ՂԱՀՐԻԵԱՆ

Դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած Սահմանադրութեան հանրաքուէի քուէարկութեանն արձագանքել են Եւրամիութեան ղեապան Պյոտր Սվիտալսկին եւ Հայաստանում ԱՄՆ ղեապանատունը: Երկու արձագանքն էլ փաստացի ընդունում է հանրաքուէի արդիւնքը, ճանաչում այն, միաժամանակ երկու դէպքում էլ կարեւոր է համարւում ընտրախախտութեանքի վերաբերեալ ահազանգերը քննելը եւ լնտրական օրէնսդրքի վրայ աշխատանքը ըստ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ չափանիշների:

Հայաստանում Սահմանադրութեան փոփոխութեան նախաձեռնութեան հենց սկզբից դիտարկման ենթարկուող գործօններից մէկը աշխարհաքաղաքական կենտրոնների մօտեցումն էր, թէ ինչպէս են դրանք վերաբերում նախաձեռնութեանը: Այդ իմաստով, մեծ հաշուով մինչև վերջ էլ չեղան յստակ ազդակներ, բացառութեամբ թերեւս Վենետիկի Յանձնաժողովի գնահատականների, որոնք սակայն այդքան էլ չորոշակիացրին Հայաստանի կախիւ հանրութեան համար, թէ ի վերջոյ ինչ է ակնկալիքն արտաքին աշխարհի մօտ: Փոխաբերէնը եղան բազմաթիւ մանիպուլյացիոն մեկնաբանութիւններ արեւմտեան կամ ուսաստանցի այս կամ այն պաշտօնեայի կարծիքների կապակցութեամբ, երբ դրանց հիման վրայ պնդուում էր, թէ ԱՄՆ, Եւրոպան կամ Ռուսաստանը դէմ են փոփոխութիւններին:

Հանրաքուէի քուէարկութեան հանդէպ արձագանքը վկայեց, որ նրանք կամ դէմ չեն, կամ պարզապէս չեն էլ հետաքրքրուած եւ գործընթացները դիտարկում են աւելի լայն համատեքստում, ներքին շրջանակում ազատութիւն տալով հայաստանեան սուբյեկտներին:

ԱՊՀ ղեկավարները յայտարարել էին, որ ընդհանրապես ամէն ինչ անցել է միջազգային չափանիշներին համապատասխան: ԱՊՀ ղեկավարներից թերեւս աւելին սպասել պետք է Հէր: Եւրոպան ու ԱՄՆ, փաստացի, ասում են գրեթէ նոյն բանը, բայց ոչ ուղղակի, եւ իհարկէ նաեւ առաւել ընդգծուած քաղաքական բովանդակութեամբ՝ խօսելով խախտումներին արձագանքի եւ ԲՕ փոփոխութեան մասին:

Հայաստանի հանրութեանը հետաքրքրում է հենց արեւմտեան կենտրոնների դիրքորոշումը, որը չատերին է թերեւս հիասթափեցրել, քանի որ չկայ ընտրախախտումներին տուած կոչոտ գնահատական:

Այդ հանգամանքը ներկայաց-  
նում է իբրեւ երկդիմիութիւն,  
երկակի ստանդարտի կիրառում,  
ինչն էլ շատերի մօտ բերում է  
մեղադրանքի, թէ ինչպէս Ռուսաս-  
տանն է լեզվախմբացնում հակա-  
սահմանադրական համակարգը,  
այդպէս էլ նոյն անում են ժողովր-  
դավարութեան անունից խօսող ԱՄՆ  
ու Եւրոպան:

Առերեւոյթ ստացւում է հենց այդպէս: Սակայն, հարկաւոր է խորամուխ լինել իրավիճակի մէջ եւ հասկանալ, թէ ինչ է կատարւում, ինչ պատճառով, ինչի համար: Վերջին հաշուով, որեւէ մէկը մեղաւոր չէ, եթէ Հայաստանի հասարակութիւնը այդօրինակ գործընթացները պատկերացնում է մանկամոտրային «մաքրութեան» դիրքերից: Վերջին հաշուով, ու՞մ

Համար կարող է պարզ չլինել, որ աշխարհքաղաքական դերակատարները առաջնորդվում են շահերով եւ քաղաքական հաշուարկներով, իսկ հռչակուող արժէքները ուղենիշներ են:

Ըստ այդմ, մինչ համեմատելը, թէ տրուում է նոյն արձագանքը, ինչ Ռուսաստանի ամբողջատիրական համակարգը ներ կայացնող դիտորդների մօտ էր, պէտք է թերեւս փորձել ստանալ պարզ հարցի պատասխան. իսկ ի՞նչ էր լինելու, եթէ օրինակ ԱՄՆ կամ Եւրոպան յայտարարոււմ են, որ քուէարկութիւնը լեգիտիմ չէ, թէ իրենք չեն ընդունում արդիւնքը, եղել է կեղծիք եւ պէտք է չեղարկուի: Հիմա պատկերացնենք, որ Հայաստանի իշխանութիւնն ասում է՝ չէք ընդունում, մի ընդունէք:

**Զի՞ կարող Հայաստանի իշխանությունն ասել դա: Իսկ ի՞նչ պետք է անի, թողնի ու գնա՞լ: Իսկ Ռուսաստանը ինչ պետք է անի այդ դեպքում, պետք է թողնի, որ Հայաստանի իշխանությունը գնա՞լ:**

Իսկ ինչ պէտք է անեն ԱՄՆ ու Եւրոպան, եթէ Հայաստանի իշխանութիւնը ուղղակի բանի տեղ չդնի իրենց կոշտ գնահատականը: Պէտք է կտրե՞ն Հայաստանի ֆինանսաւորումը, թէ՞ պէտք է հետ պահանջեն Հայաստանի պարտքը: Եթէ ԱՄՆ-ն ու Եւրոպան ունենալին այդօրինակ պահանջների եւ կոշտութեան գործնական հնարաւորութիւն, իհարկէ ողջխտնութեան եւ քաղաքական պրպագմտիչմի շրջանակում, ապա դա կը բանեցնէին օրինակ Սեպտեմբերի 2-ին, որ չլինէր Սեպտեմբերի 3-ը: Կամ Սեպտեմբերի 3-ից յաջորդ

Σωρ.ρ 48 5



**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՏՈՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁՍԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝  
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԴԵԱՆ

# MASSIS Weekly

**Organ of the Armenian Social  
Democratic Hunchakian Party  
of Western USA**  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: [massis2@earthlink.net](mailto:massis2@earthlink.net)  
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
**USA \$50.00, \$100.00 (First Class)**  
**Canada \$125.00 (Air Mail)**  
**Overseas \$250.00 (Air Mail).**  
**All payments must be made in**  
**US funds & Drawn on US banks.**

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» ամսականնօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Քաղաքացի Դիտորդ»-ը Նախնական Տուեալները Կեղծ Է Գնահատում



«Քաղաքացի Դիտորդ» կազմակերպութեան անդամները մամուլ ասուլիսի ընթացքին

Հայաստանի բոլոր ընտրատարածքներում քուէրակութիւնը դիտարկած չորս տեղական կազմակերպութիւնները միաւորող «Քաղաքացի Դիտորդ»-ը սուտ եւ կեղծուած է գնահատում Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովի (ԿԸՅ) նախնական տուեալները՝ հանարքուէի արդիւնքների վերաբերեալ:

«Այն ամբողջ արսենալը՝ կեղծիքների, ճնշումների, ապօրինութիւնների, որը նոյնիսկ չկար 2013 թուականին, իշխանութիւնը ի ցոյց դրեց, եւ ամբողջ բուկետով, ամբողջ փնջով, իրականացրեց երեկուայ ընթացքում: Ես առաջին անգամ արձանագրում եմ՝ նման ճնշումներ մեր դիտորդների նկատմամբ, ես չեմ տեսել, սա ուղղակի աննախադէպ է», - ասաց «Հելսինկեան Քաղաքացիական Ասամբլեայ»-ի վանաձորի գրասենեակի ղեկավար Արթուր Սաքունցը:

Մօտ 1000 դիտորդներից կազմուած «Քաղաքացի Դիտորդ» նախաձեռնութիւնը յայտարարում է՝ տեղի են ունեցել լցոնումներ, իրենց նկատմամբ աննախադէպ ճնշումներ, բացակայ ընտրողների փոխա-

րէն քուէրակութեան դէպքեր, եւ այլ խախտումներ, ընդ որում, նաեւ ընտրատեղամասերից դուրս:

«Իրաւունքի եւրոպա Միաւորում» իրաւապաշտպան հասարակական կազմակերպութեան ներկայացուցիչ Տիգրան Եգորեանը կոպիտ խախտումների օրինակներ բերեց: «Բացի քուէատուփերի լցոնումը, դա՛ ոչ ցանկալի քուէաթերթիկների, արդէն լրացուած քուէաթերթիկների գողանալու դէպքերն են, ստորագրուած քուէարկողների ցուցակների գողանալու դէպքերն են, քուէատուփերի տեղամասերից դուրս բերելու դէպքերը, քուէատուփերի կամ արդէն իսկ տեսակաւորուած քուէաթերթիկների արդէն իսկ կատարուած հաշուարկի գրոյացումը՝ սեղանները շուռ տալու, լոյսերն անջատելու, դիտորդներին մեկուսացնելու, ոստիկանութիւն բերման ենթարկելու եւ այլ միջոցներով», - ասաց Եգորեանը:

Արթուր Սաքունցը վստահեցրեց, որ բազմաթիւ ընտրախաւտումների վերաբերեալ դիտորդներն այսօր ունեն ապացոյցներ՝ տեսագրութիւններ:

Թեան հետ կապուած. «Իւրաքանչիւր իշխանութիւն, եթէ չունի իրեն արժանի ընդդիմութիւն, այդ իշխանութիւնը լուրջ խնդիր ունի երկրի պետականութեան կայացման հետ կապուած»:

Հարցին էլ՝ ԲԿԶ-ն ու Դաշնակցութիւնը ձեզ արժանի՞ են, Վ. Բաղդասարեանը պատասխանեց, որ նրաք էլ դեռ պէտք է ձեւաւորուեն:

Վ. Բաղդասարեանի գնահատմամբ՝ անկախ Հայաստանի պատմութեան մէջ մենք նման տիպի ընտրութիւն, հանրաքուէ չենք ունեցել. «Եթէ դուք ասում էք՝ համատարած խախտումներ, չկան նման տիպի երեւոյթներ»:

Լրագրողներից մէկի հարցին՝ Սերժ Սարգսեանը պատրաստո՞ւմ է Տիգրան Մուկուչեանին տարուայ լաւագոյն նկարիչ մրցանակին արժանացնել. Վ. Բաղդասարեանն այսպէս արձագանգեց. «Տիգրան Մուկուչեանը կատարել է իր գործը՝ բարձր մակարդակով, Տիգրան Մուկուչեանն այնտեղ անելիք չունէր, ինքը հրապարակել է արդիւնքները»:


«Առջեւում Բարդ Ժամանակներ Են»

Մինչեւ տարեվերջ խորհրդարանը պէտք է հաստատի 2016թ. պիւտձէ: Մինչ այդ, թէ կառավարութեան ներկայացուցիչները, թէ անկախ փորձագէտները նկատում են, որ առջեւում բարդ ժամանակներ են: Տնտեսական զարգացման եւ հետազօտութիւնների կենտրոնի ծրագրի ղեկավար Կարինէ Յարութիւնեանը «Ազատութեան» հետ զրոյցում մատնանշում է եկամուտների անկումը, պարտքի սպասարկման բարձր տոկոսավճարները:

«Միշտ պիւտձէտային եկամուտների աճ է գրանցուել, մինչդեռ հիմա, փաստօրէն, անկում ենք սպասում: Այս իմաստով կարող ենք ասել, որ իրավիճակը բարդանում է»:

Փորձագէտի խօսքով, 2016-ի պիւտձէն որեւէ կերպ հնարաւոր չէ համարել զարգացման պիւտձէ: Թէեւ նախագծի հիմնական շեշտադրումներն արուած են գործարար միջավայրի բարելաւման եւ արտահանման զարգացման վրայ, այնուամենայնիւ, եկող տարուայ հիմնական ֆինանսական փաստաթղթի այդ դրոյթները, ըստ Կարինէ Յարութիւնեանի, ընդամենը հուշակազրային բնոյթ ունեն: «Պիւտձէտային ծախսերն առանձնապէս էլ ուղղուածութիւնը չունեն, կամ էլ այդ ուղղութեամբ նոր ծրագրեր ու ծախսերի աճ 2016-ի պիւտձէ չի նախատեսուում»:

Ձի աճի թոշակների, նուազագոյն աշխատավարձի չափը, նոյնը կը մնան պետական հատուածի աշխատողների վարձատրութիւնները, իսկ գնաճը կը կազմի շուրջ 4 տոկոս: «2,2 տոկոս տնտեսական աճ՝ 4 տոկոս գնաճի պայմաններում, այսինքն՝ իրական եկամուտներ մենք չենք կարող ակնկալել: Համեմատութեան համար նշեմ, որ հենց Հայաստանի առողջապահութեան նախարարութեան հաշուարկած սպառողական զամբիւղի նուազագոյն արժէքն աւելի բարձր է, քան 55 հազար դրամի նուազա-



Տնտեսագէտ Կարինէ Յարութիւնեան

գոյն աշխատավարձը», - համեմատում է փորձագէտը:

2016 թուականին աճելու է նաեւ Հայաստանի արտաքին պարտքը՝ կազմելով աւելի քան 4,5 միլիարդ դոլար, ինչը գրեթէ երեք անգամ գերազանցում է նախաճգնաժամային՝ 2008 թուականի ցուցանիշը:

2016-ին բարդութիւններ է կանխատեսում նաեւ կառավարութիւնը: Վարչապետ Յովիկ Աբրահամեանը, անցեալ ամիս խորհրդարանում ներկայացնելով պիւտձէի նախագիծը, խօսեց լարուած աշխարհաքաղաքական զարգացումների մասին, որոնք խոչընդոտում են տնտեսական աճին: Կարինէ Յարութիւնեանը համաձայն է՝ Հայաստանի նման փոքր երկրի վրայ արտաքին գործօնները ազդեցութիւն ունենում են, բայց խնդիրները հիմնականում, այնուամենայնիւ, երկրի ներսում են, ասում է նա:

«Մենք պիւտձէի արդիւնաւէտ կատարման, կառավարման որակի լուրջ խնդիրներ ունենք մեր երկրում, որտեղ տնտեսական իրավիճակը միշտ է, որ կարելի է պայմանաւորել տարածաշրջանային գործօններով»:

Սիւնիքի Մարգի Ներքին Խնձորեսկ Գիւղում Բոլորը Մէկ Մարդու Պէս «Այո» Են Քուէարկել «Ոչ» Քուէարկածների Թիւր 0

Սիւնիքի մարգի Ներքին Խնձորեսկ գիւղում սահմանադրական հանրաքուէին մասնակցած 822 ընտրողները միաբերան «այո» են ասել իշխանութեան նախաձեռնութեանը, պաշտօնական տուեալներով դէմ քուէարկածների թիւը 0 է:

Ընդ որում հանրաքուէին մասնակցել է գրանցուած ընտրողների 98 տոկոսը: Գիւղապետ Մարտուն Արզանեանը չի զարմանում: Դեռ 90-ական թուականներից բոլոր ընտրութիւններում իշխանութիւնները Ներքին Խնձորեսկում 100 տոկոսանոց քուէ են ստացել:

«Մարզպետը որ լսեց, որ 100 տոկոս ա, ասաց՝ ամօթ ա, գոնէ մարդկանց հաշուի առէք, չէ որ դէմեր էլ կան էլի, լաւ չի, որ 100 տոկոսով ըլի, բայց դե ժողովուրդը չթողեցին, ասին՝ մեր կամքով ընտրել ենք, իսկ՝ էք մեր ձայնի իրաւունքը կտրոււմ», - պատմեց գիւղապետը:

Ատրէշճաի հետ սահմանակից գիւղում այս անգամ ընտրելու իրաւունք են ստացել նաեւ պայմանագրային գինձառայողները: Մարտուն Արզանեանը, որ գիւղի ղեկավարն է արդէն շուրջ 20 տարի

համոզուած է, առանց նրանց քուէի էլ իր գիւղում արդիւնքները 100 տոկոսանոց էին լինելու. պնդում է՝ հանրաքուէն ազատ, արդար ու թափանցիկ է անցել:

«Անձամբ ես Հանրապետական կուսակցութեան վստահելի անձն եմ եղել: Ներկայ եմ եղել, «այո»-ի մէջ մի խազ կար, ես անձամբ առաջարկեցի, որ անվաւեր համարեն: Ով որ կասկածում ա, թող ստուգեն», - ասաց գիւղապետը:

Բնակիչներից շատերը հաստատեցին, որ գնացել են քուէարկութեան ու «այո» ասել:

«Յոյց են տալիս, ասենք, ղեկավարութիւնը ասում է՝ յանուն վաղուայ ապագայի է: Միգուցէ, ի՞նչ իմանամ: Փորձը փորձանք չի, էս անգամ էլ փորձենք»:

«Ինչ ասում են, ղեկավարութեան ասածը պտի անենք, էդ ա, չանենք... ստեղի ղեկավարը ուզում ա «այո» ըլի, մենք էլ «այո» ենք ասում, ղեկավարը չի ուզում՝ մենք էլ չենք ասում: «Ոչ» ասող չի եղել, մեր գիւղում տենց բան չկայ: Էս գիւղում ամբողջութեամբ մի հոգու ենք ընտրում: Ասում են՝ այո, այո ենք ասում, ասում են՝ ոչ, ոչ ենք ասում:



ԼՈՒՐԵՐ

National Interest. «Ժամանակն է Թուրքիային Զեռացնել ՆԱՏՕ-ից»

ՆԱՏՕ-ն բոլոր հիմքերն ունի ազդեաիւ եւ անյուսալի պահուածքի պատճառով Թուրքիային դաշինքից հեռացնելու շուրջ մտորելու համար: Նման կարծիք է յայտնել Քաթոնի ինստիտուտի աւագ գիտաշխատող, The National Interest-ի խմբագիր Թեդ Գալեն Քարփենթերը: Նրա խօսքով՝ ուսական Սու-24 օդանաւի վրայ յարձակումը ընդամէնը մէկն է այն միջադէպերից, որոնք արդէն վաղուց պէտք է առաջ բերէին ՆԱՏՕ-ի անդամ երկրների մտահոգութիւնը:

Թուրքական օդանաւերը միայն 2014թ. աւելի քան 2 հազար անգամ խախտել են Յունաստանի օդային սահմանը: Յունաստանի իշխանութիւնները բազմիցս յայտարարել են, որ ստիպուած են ռազմական պիւտճէի զգալի մասը տրամադրել օտար օդանաւերը բռնելուն:

Ռուսաստանի օդանաւի միջադէպը տագնապի առիթ է տալիս: Բարեբախտաբար ՌԴ կառավարութիւնը սահմանափակուեց դեռ միայն տնտեսական պատժամիջոցներով: Սակայն ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը յստակ հասկացնել տուեց, որ նման միջադէպի կրկնութիւնը կը հանգեցնի շատ աւելի լուրջ հետեւանքների: Այժմ ՆԱՏՕ-ի Կանոնակարգի 5-րդ յօդուածի կիրառման հարցը (այն նախատեսում է հաւաքական ինքնապաշտպանութիւն) տեսական հարթակից տեղափոխուում է գործնական, կարծում է հեղինակը:

Յօդուածագիրը յիշեցնում է, որ դեռեւս 1974թ. Թուրքիան ոչ միայն ներթափանցեց Կիպրոս, այլ նաեւ օկուպացրեց կղզու 37 տոկոսը եւ դուրս մղեց տեղաբնակներին իրենց հողերից: Այդ ենթատեքստում հեղինակը նշում է, որ արեւմտեան ուժերը չպէտք է

դատապարտեն Ուզբախիսյում ՌԴ գործողութիւնները, եթէ ՆԱՏՕ-ի անդամ պետութիւնը նմանատիպ արարք է գործել:

ՆԱՏՕ-ի ղեկավարների համար վերջին կաթիլը պէտք է դառնայ ԻՊ-ի նկատմամբ Թուրքիայի քաղաքականութիւնը: Թուրքիան Սաուդեան Արաբիայի եւ Կատարի հետ աջակցում է սուննիական խմբաւորումներին, որոնք արդիւնքում միաւորուեցին ԻՊ-ի հետ, եւ հենց նրանց ցուցաբերած օգնութեան արդիւնքում է ԻՊ-ի ձեռքում այդքան զէնք հաւաքուել: Անգամ հասկանալով, թէ ինչ հրեշաւոր կառոյց է «Իսլամական պետութիւնը»՝ Անգարան մտադիր է պաշարել խմբաւորման դէմ եւ զբաղւում է քրդերի դիրքերի թուլացմամբ: Աւելին՝ Թուրքիան ԻՊ-ին թոյլ է տալիս նաւթ մատակարարել սիրիական սահմանից, որը, դուրս գալով համաշխարհային շուկայ, թոյլ է տալիս ահաբեկչական խմբաւորմանը եկամուտներ ստանալ:

ՆԱՏՕ-ի համար բաւականին վատ իրավիճակ է ստեղծուել, երբ նրանից ակնկալում են ողջամտութիւնը կորցրած, ազդեաիւ դաշնակցի աջակցութիւն, որը կարող է դաշինքի միւս անդամներին ներքաշել միջուկային տէրութեան դէմ աղետալի պատերազմի մէջ: Սակայն ամենավատն այն է, որ այդ «դաշնակիցը» ակնյայտ նշաններ է ցուցադրում, որ ինքը 5-րդ շարասիւն է հանդիսանում՝ օգնելով թշնամուն, որին ՆԱՏՕ-ն խոստացել է ոչնչացնել: ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի համար ժամանակն է սթափ գնահատել իրենց այսպէս կոչուած դաշնակցին: Պէտք է լուրջ վերաբերել նաեւ այն հարցին, թէ չարժի արդեօք Թուրքիային բացառել ՆԱՏՕ-ից, եզրափակում է հեղինակը,

27 Տարի Անց Հայաստանում Յիշում Եմ 1988-ի Սպիտակի Երկրաշարժի Զոհերին

17 տարի առաջ՝ 1988թ. Դեկտեմբերի 7-ին՝ տեղական ժամանակով ժամը 11:41, Հայաստանը ցնցեց Սպիտակի աւերիչ երկրաշարժը: Հզօր ստորգետնեայ ցնցումները կէս րոպէում աւերեցին հանրապետութեան գրեթէ ողջ հիւսիսային մասը՝ ընդգրկելով մօտ 1 մլն բնակչութիւն ունեցող տարածք: Երկրաշարժի էպիկենտրոնում՝ Սպիտակում, ցնցումների ուժգնութիւնը կազմել է 10 բալ (12-բալանոց սանդղակով): Ստորգետնեայ ցնցումները զգացուել էին Երեւանում եւ Թբիլիսիում:



Մասնագէտների հաշուարկներով՝ երկրաշարժի պահին երկրակեղեւի պատուճածքի զօտուց ազատուել է Հիւրոսիմայի վրայ նետած աղոմային ուղմբի նման 10 աղոմային ուղմբի պայթիւնին հաւասարագոր հներգիա: Երկրաշարժի առաջ բերած ալիքը տարածուել էր ողջ երկրով եւ արձանագրուել Եւրոպայի, Ասիայի, Ամերիկայի եւ Աւստրալիայի գիտական լաբորատորիաներում:

Պաշտօնական տեղեկութիւն-

ներով՝ զոհուել է աւելի քան 25 հազար մարդ, 19 հազարը հաշմանդամ է դարձել, անօթեւան է մնացել 530 հազար բնակիչ:

Երկրաշարժի հետեւանքով հիմնովին աւերուեց Սպիտակ քաղաքը: Սպիտակի եւ մօտակայ գիւղերի հետ մեկտեղ բնութեան տարերքը աւերեց 21 քաղաք ու աւան, 324 գիւղ, ոչնչացրել Հայաստանի երկրորդ քաղաք Լենինականի (այժմ Գիւմրի) բնակելի, սոցիալական եւ արդիւնաբերական ֆոնդի 80 տոկոսը: Մեծ աւերածութիւններ եղան նաեւ մեծութեամբ երրորդ քաղաքում՝ Կիրովականում (այժմ Վանաձոր): Երկրաշարժը շարքից հանեց երկրի արդիւնաբերական ներուժի մօտ 40 տոկոսը: Այն ժամանակ Հայաստա-

Սերժ Սարգսեանը Հրաժարուե՞լ է Իր Նախկին Խոստումէն



Նախագահ Սերժ Սարգսեան կը պատասխանէ լրագրողներու հարցերուն

Նախագահ Սերժ Սարգսեանը, որ խոստացել էր ապագայում պաշտօն չստանձնել, այդպէս էլ չի յստակեցնում՝ ի վերջոյ, 2018 թուականին նախագահի լիազօրութիւնները վաճը դնելուց յետոյ ինչո՞վ է զբաղուելու, զբաղեցնելու է վարչապետի՞, Ազգային ժողովի նախագահի՞, թէ նախագահի պաշտօնը:

Հայաստանեան հեռուստաընկերութիւններին տուած ծաւալուն հարցազրոյցում, պատասխանելով հարցին՝ եթէ հանրաքուէից յետոյ անցնենք երկրի ղեկավարման խորհրդարանական մոդելին, ապա ինչո՞վ էք զբաղուելու՞ Սերժ Սարգսեանն արձագանգեց. «Նախ պէտք է ասեմ, որ ես ձեր շտապողականութիւնը չեմ կիսում, եւ ինձ կարող են երեք տարի յետոյ ասել՝ նախկին Նախագահ»:

Լրագրողի դիտարկմանը՝ «Իսկ երեք տարին լրանալուց յետոյ», Սերժ Սարգսեանն այսպէս պատասխանեց. «Դա արդէն այլ բան է: Իսկ դրա մասին ես կարծում եմ՝ կը խօսենք 2017թ. խորհրդարանական ընտրութիւններից յետոյ: Հիմա շատ վաղ է այդ մասին խօսելը, եւ այս կարեւոր թեման, չեմ կարծում, որ համադրելի է իմ քաղաքական ապագայի թեմայի հետ»:

Սերժ Սարգսեանը իր քաղաքական ապագային վերաբերող՝

մէկ այլ լրագրողի նոյնաբովանդակ հարցին կրկին անորոշ պատասխան տուեց, պնդելով, թէ հարցն իրենից հետաքրքրութիւն չի ներկայացնում, եւ դրան կանդորադառնայ յաջորդ խորհրդարանական ընտրութիւններից հետ: «Ես ինչո՞ւ եմ ասում 2017 թուականից յետոյ, որովհետեւ լրջօրէն խօսել վարչապետ դառնալու, կամ կառավարութիւն ձեւաւորելու մասին կարելի է այն ժամանակ, երբ դու խորհրդարանում մեծամասնութիւն ունես: Իսկ եթէ խորհրդարանում մեծամասնութիւն չունես՝ Սահմանադրութիւնը փոխուած է, փոխուած է, ինչպէ՞ս պէտք է վարչապետ աշխատես, ինչպէ՞ս պէտք է վարչապետ դառնաս: Զկայ այդ հնարաւորութիւնը»:

«Հիմա հրաժարուո՞ւմ էք ձեր խօսքերից, որ չէք պատրաստուում դառնալ վարչապետ, նախագահ եւ ԱԺ նախագահ», - այս հարցին ի պատասխան, նախագահը նշեց. «Ոչ, ես իմ խօսքերից, չասեմ երբեք, չեմ հրաժարուել, բայց հիմնականում, լինի դա կենցաղում, թէ քաղաքականութեան մէջ, ոչ մի բանից չեմ հրաժարուում: Ես ուղղակի չեմ ուզում լաւ գործը, սկզբունքային գործը, խառնել մէկ այլ գործի հետ: Սա է իմ ամբողջ նպատակը: Որեւէ բանից չեմ հրաժարուում»:

Լեռնային Ղարաբաղը Պատժիչ Գործողութիւններով Ծնշում Է Հակառակորդի Ակտիւութիւնը

Լեռնային Ղարաբաղի եւ Ատրպէյճանի զօրքերի շփման գծում հակառակորդը շարունակում է ինտենսիվօրէն խախտել հրադարձի ռեժիմը, փոխանցում է Լեռնային Ղարաբաղի պաշտպանութեան նախարարութիւնը:

Հաղորդագրութեան համաձայն՝ Դեկտեմբերի 7-ին եւ լոյս 8-ի գիշերը շփման գծում հակառակորդի կողմից հրադարձի ռեժիմը խախտուել է շուրջ 250 անգամ, տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից, 60 (137 արկ), 82 (209 արկ), 120 (52 արկ) միլիմետրանոց ականանետներից,

նին օգնութեան եկան Խորհրդային Միութիւնն ու ողջ աշխարհը:

Այժմ աճել է մի ողջ սերունդ, որը ծնուել է սարսափելի երկրաշարժից յետոյ: Սակայն նրանք, ովքեր վերապրել են 1988թ. Դեկտեմբերի 7-ը, երբեք չեն մոռնալ լուսանկարները, որոնք ցուցադրուել էին աշխարհի բոլոր հեռուս-

ՀԱՆ-17 (93 արկ), ՌԴԳ-7 (11 արկ) տիպի նռնականետներից, ինչպէս նաեւ TR-107 տիպի գնդիթահրթիռային կաեանքից (42 արկ) հայ դիրքապահների ուղղութեամբ արձակուել է աւելի քան 2700 կրակոց:

«Պաշտպանութեան բանակի առաջապահ զօրամասերը շարունակում են վստահօրէն իրականացնել մարտական հերթապահութիւն՝ իրենց պատժիչ գործողութիւններով ճնշելով հակառակորդի նախադրածակ ակտիւութիւնը», - հաղորդում է Լեռնային Ղարաբաղի ռազմական գերատեսչութեան մամուլի ծառայութիւնը:

տատեսութիւններով: Դրանցից մէկում փողոցում դրուած էր դատարկ դագաղների երկար շարք, իսկ միւսում փլատակների տակից դուրս էր ցցուել սիւն, որի վրայ ժամացոյցի սլաքները կանգ էին առել 11:41-ի վրայ. հենց այդ րոպէին Սպիտակի ու 58 գիւղեր վերացան երկրի երեսից:



## Միջազգային Մամուլն Անդրադառնում Է Հայաստանեան Հանրաքուէին



Նոյն անձի՞ք՝ տարբեր հագուստով կը ֆուէարկեմ առնուզմ երկու անգամ՝

«Եւրոպացի դիտորդներն ու ընդդիմադիր պատգամաւորները լուրջ խախտումներ արձանագրեցին Կիրակի օրը Հայաստանում կայացած սահմանադրական փոփոխութիւնների հանրաքուէի ընթացքում», - գրում է բրիտանական

BBC-ին՝ մէջբերելով կիրակնօրեայ քուէարկութիւնը դիտարկած եւրոպացի դիտորդներից մէկի՝ նորվեկուհի Լենէ Վետտելանդի հետեւեալ խօսքերը. - «Թէ քարոզարշաւը, եւ թէ բուն քուէարկութիւնը մեզ հիասթափութիւն են

պատճառել: Հանրապետական կուսակցութիւնը լուրջ ճնշումներ գործադրեց թէ դիտորդների, եւ թէ լրագրողների նկատմամբ»:

BBC-ին չի շրջանցում նաեւ Եւրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի (ԵՆԽՎ) դիտորդների գնահատականը:

«Սահմանադրական այս փոփոխութիւնները Հայաստանի քաղաքացիներից շատ շատերի կողմից ընկալում են որպէս գործող նախագահի կողմից կիրառուող միջոց՝ սեփական իշխանութիւնը երկրորդ եւ վերջին նախագահական ժամկէտից յետոյ երկարաձգելու համար», - դիտորդների յայտարարութեան այս հատուածն է մէջբերում բրիտանական լրատուամիջոցը՝ յիշեցնելով, որ ԵՆԽՎ-ն Եւրոպայի առաջատար իրաւապաշտպան կառույցն է:

Բրիտանական մէկ այլ հեղինակաւոր լրատուամիջոց՝ The Guardian-ը, անդրադառնալով Կիրակի օրը կայացած սահմանադրական հանրաքուէին, մէջբերում է տեղացի դիտորդների Twitter-ում արուած գրառումները: «Սրանք իմ դիտարկած թուով հինգերորդ հայաստանեան ընտրութիւններն էին: Իմ տեսածների շարքում այս քուէարկութիւնը միանշանակօրէն ամենաբռնին էր, փտանգաւորն ու կեղծիքներով աչքի ընկնողը», - Բաբգէն Տէր-Գրիգորեանի թուիթերեան գրառումն է մէջբերում The Guardian-ը:

Թերթը մէջբերում է նաեւ Կարենայ Աւեդիսեանի խօսքերը. - «Զգալի թուով տեղամասերում «ոչ»-ը 0 քուէ է ստացել: Զգիտես անգամ լաս, թէ խնդաս»: The Guardian-ը նաեւ գրում է՝ «վիճալարոյց այս քուէարկութեան արդիւնքները քննադատում են նաեւ ընդդիմութեան ներկայացուցիչները, ովքեր պնդում են, որ այս ամէնի իրական նպատակը գործող նախագահին իշխանութեան դեկին թողնելն է նրա պաշտօնավարման ժամկէտի աւարտից յետոյ եւս»:

New-York Times-ը արտապել է արեւմտեան առաջատար լրատուական գործակալութիւններ-

րից մէկի՝ Reuters-ի յօդուածը, որում կարդում ենք. - «Հայաստանցիները քուէարկեցին վարչապետի լիազօրութիւնների ընդլայնման օգտին: Կողմնակիցները պնդում են, որ սա կը նպաստի երկրում կայունութեան հաստատմանը: Հակառակորդների խօսքով, սակայն, այս քայլը էլ աւելի կ'ամրապնդի նախկին խորհրդային հանրապետութեան նկատմամբ իշխող կուսակցութեան կողմից սահմանուած վերահսկողութիւնը»:

New-York Times-ի տպագիր տարբերակի ութերորդ էջում հրապարկուած յօդուածում նաեւ նշուած է. - «Սահմանադրական այս փոփոխութիւնները ընդդիմութիւնը հնարք է որակում, որը հնարաւորութիւն պէտք է տա Սերժ Սարգսեանին 2018-ին՝ իր նախագահական ժամկէտի աւարտից յետոյ, սահուն կերպով տեղափոխուել ընդլայնուած լիազօրութիւններ ունեցող վարչապետի աթոռին»:

«Երկուշաբթի օրը մօտ չորս հազար մարդ դուրս եկաւ Երեւանի փողոցները՝ բողոքելով վիճալարոյց հանրաքուէի ընթացքում ընդունուած սահմանադրական փոփոխութիւնների դէմ, որոնք սահմանափակում են նախագահի լիազօրութիւնները», - գրում է AFP գործակալութիւնը:

«Յուշարարները բարձրախօսով վանկարկում էին. - «Դուրս արի՝ փողոց, մասնակցի՛ր յեղափոխութեանը»: AFP-ն իր ընթերցողներին նաեւ յիշեցնում է, որ Սերժ Սարգսեանը նախագահի պաշտօնը ստանձնել է 2008-ին: «Այդ մի ընտրութիւններին յաջորդած բախումների ընթացքում 10 մարդ զոհուեց», - յիշեցնում է ֆրանսիական գործակալութիւնը:

Eurasianet կայքն էլ, անդրադառնալով ընտրացուցակների ուղծացուածութեան խնդրին մէջբերում է Transparency International կազմակերպութեան հայաստանեան մասնաճիւղի ղեկավար Վարուժան Հոկտանեանի խօսքը. - «Ես չեմ զարմանայ, եթէ 2017-ին Հայաստանի բնակչութեան 110-120 տոկոսը յայտնուի ընտրացուցակներում»:

## Ինչ Սպասել Հայաստանի Հանդէպ

Շաբաուակուած էջ 2-էն

Երկու տարիների ընթացքում:

ԱՄՆ ու Եւրոպան չունեն այդ հնարաւորութիւնը, որովհետեւ Հայաստանը փաստացի ռուսական կայսրութեան տարածք է: Գուցէ թուայ կոպիտ համեմատութիւն, բայց ԱՄՆ ու Եւրոպան չեն ծանաչում Աբխազիայի եւ Հարաւային Օսիայի ընտրութիւնների արդիւնքները, եւ ի՞նչ:

Փոխարէնը, Հայաստանում տեղի ունեցած քուէարկութեան, եւ ընդհանրապէս ընթացող պրոցէսների հանդէպ այդօրինակ փափուկ վերաբերմունքով նրանք պահում են այդ գործընթացների վրայ առաւելագոյն արդիւնաւէտ ազդեցութեան հնարաւորութիւնը, որը թոյլ կը տայ թէկուզ դանդաղ, թէկուզ փոքր քայլով, բայց Հայաստանում իրավիճակ փոխել եւ իրականացնել որոշակի արդիականացման գործընթաց: Հայաստանի խնդիրների ու հրամայականների համեմատութեամբ, դա իհարկէ խիստ անհամարժէք է պետութեան ու հասարակութեան համար անհրաժեշտ ծաւալներին, որ քաղաքացիներն ու Հայաստանի շահով, ապագայով ու անվտանգութեամբ մտահոգ հան-

րութեան մի շօշափելի մասն ակնկալում է Եւրաստլանտեան հանրոյթի հետ գործակցութիւնից:

Բայց դրա այլընտրանքը եւրասիական հանրոյթի տակ առաւել խորը խրուելն է: Եւ այդ իմաստով, Հայաստանի արդիականացման հեռանկարով մտահոգ հանրութեանը թերեւս պէտք է աւելի շատ հենց եւրատլանտեան հանրութեան կոշտ եւ կտրուկ գնահատականը մտահոգեր՝ քանի դեռ Հայաստանը ԵՏՄ համակենտրոնացման ճամբարում է, ոչ թէ համեմատաբար փափուկ ու զուսպ գնահատականը, որ հնչում է վաշինգտոնից ու Բրիւսելից, այդպիսով պահելով Հայաստանի շահից բխող գործակցութեան թելերը:

Վերջին հաշուով, Հայաստանի ակտիւ հանրութեան համար հարկ է հասնել մի պարզ գիտակցութեան՝ արտաքին դերակատարները արձագանքում են ներքին իրողութիւններին, ու իրենց վարքը կառուցում հենց դրանցից բխող հաշուարկով: Հետեւաբար արտաքին արձագանքը կախուած է այն իրողութիւնից ու արդիւնքից, որ Հայաստանի քաղաքացին ինքը կ'արձանագրի իր պետութեան ներսում:

«ԼՐԱԳԻՐ»

## Հայաստանի Նոր Սահմանադրութեան «Այո»

Շաբաուակուած էջ 1-էն

բայց նախ պէտք է ունենան փաստական հիմք: Կր ներկայացուէ՞ն՝ դրանք բոլորը սահմանուած ժամկէտներում կը քննարկուեն եւ դրանց վերաբերեալ իրաւական դիրքորոշումներ կը լինեն», - «Ազատութեան» հետ գրոյցի ընթացքին մեկնաբանեց Մուկուչեան: Հանրաքուէին «ոչ» քարոզող՝ «Նոր Հայաստան» համախմբումի ղեկավարներէն Բաֆֆի Յովհաննիսեան իր կարգին յայտարարեց որ, Դեկտեմբեր 6-ին կատարուածը պետական դաւաճանութիւն էր:

«Աւելի ահաւոր, աւելի տմարդի, աւելի հակահայկական պետական դաւաճանութիւն, իշխանական մակարդակով ահաբեկչութիւն մեր պատմութեան մէջ երբեք տեղի չի ունեցել: Այսօր Հայաստանում ծայրից ծայր ՀՀԿ-ն, որը գտնուում է հոգեվարքի մէջ, իջեցրել է հրաման՝ պատերազմ տալ սեփական ժողովրդի դէմ», - ըսաւ ան: Յովհաննիսեանի համաձայն, կատարուածէն յետոյ պէտք է հրաժարական տան Սերժ Սարգսեանը, վարչապետ Յովիկ Աբրահամեանը եւ պատասխանատուութեան ենթարկուին բոլոր այն գիւղապետերը, քաղաքապետերը, մարզպետները, յանձնաժողովներու նախագահներուն հետ, որոնք «հազարաւոր հայերու մասնակից դարձուցին մեղաւորութեանը»:

Հայաստանի բոլոր տեղամասերուն մէջ աւելի քան 1000 անկախ

դիտորդներ ունեցող տեղական «Քաղաքացի Դիտորդ» կազմակերպութիւնը ԿԸՅ-ի նախնական տուեալները գնահատեց «կեղծ»:

Իշխող Հանրապետական կուսակցութեան գնահատականը բնականաբար տարբեր էր: «Ընդհանուր առմամբ մէկ քայլ առաջ եւ ժողովրդավարական չափանիշներուն համապատասխանող» համարելով քուէարկութիւնը:

Միջազգային դիտորդական կազմակերպութիւններէն ԵՆԽՎ-ի պատուիրակութիւնը հրապարակելով իր եզրակացութիւնը հաստատեց, որ ընտրողներու համեմատաբար ցած մասնակցութիւնը կ'արտացոլէ այն փաստը, որ այս հանրաքուէն պայմանաւորուած էր քաղաքական շահերով, այլ ոչ թէ երկրի բնակչութեան հասարակական կարիքներով: Անցումը նախագահական համակարգէն խորհրդարանական համակարգին, բազմաթիւ քաղաքացիներու կողմէ ընկալուած է որպէս միջոց գործող նախագահի համար՝ իշխանութեան մնալու իր նախագահութեան երկրորդ եւ վերջին ժամկէտի աւարտէն յետոյ:

«Ընտրացուցակներու անճշդութիւնները, որոնք կը պարունակեն արտերկրի մէջ մշտապէս բնակող անհատներու, նոյնիսկ մացացածներու անուններ՝ հանգցնելով այն պնդումներուն, որ այս անունները կ'օգտագործուին ունեց կողմէ մի քանի անգամ քուէարկելուն», ըսուած է եւրոպական կառույցի յայտարարութեան մէջ:



ՏԱՅԷՇ ԵՒ ՍՈՒՐԻԱԿԱՆ ՔԱՐԻԻՂՈ



Վերջերս Ռուսիոյ կողմէ շարք մը ամբաստանութեանց թիւրախ հանդիսացաւ Թուրքիայի նախագահ՝ Ռեճէպ Թայյպ Էրտողանի անմիջական մերձաւորները, որոնք սերտ գործակցութեան մէջ են իսլամական պետութիւն կոչուող ծայրայեղական խմբակցութեան՝ Տահէշի (այլ անունով ISIS) հետ:

Արդարեւ Սուրիոյ եւ Իրաքի տարածքին ինքնակոչ խալիֆայութիւն յայտարարող այս ծայրայեղական խմբաւորումը իր ֆինանսաւորումն ապահովելու համար դիմած էր այդ շրջաններու քարիւղի ապօրէն շահագործումին: Այս գործարքը կասեցնելու համար վերջին շաբաթներուն ամերիկեան օդուժն սկսաւ օդային ռմբակոծումներ կատարել քարիւղ արտահանող կեդրոններու վրայ: Նշենք նաեւ որ Տահէշը 2014էն ի վեր իր հակակշռին տակ առած է Սուրիոյ արեւելքը գտնուող Տէր Ջօրի նաւթի արդիւնաբերութեան կեդրոնը, նոյն տարին անոնք գրաւեցին նաեւ Թանաքի, Օմարի եւ Ժաֆրայի նաւթահանքերը:

Միւս կողմէ իսլամական պետութեան գինեալները իրենց կռիւները շարունակելով վարչակարգի ոյժերուն դէմ, Սուրիոյ Հոմա գաւառի ժազալի քարիւղահանքն ալ գրաւման տակ առին, սպառնալով նոյն ժամանակ Փալմիրի քարիւղի հանքերուն:

Յամենայն դէպս նաւթարդիւնաբերութեան ներկայ տարողութիւնն այն չէ ինչ որ էր նախապատերազմեան շրջանին: Ուժանիւթի վերլուծաբաններուն համաձայն ներկայիս քարիւղի արտահանութիւնը օրական 30,000 էն 40,000 տակաւ է, նախապատերազմեան շրջանի օրական 385,000 տակաւի դիմաց:

Ուժանիւթի ճարտարարուեստի Rigzone թերթի համաձայն

նախապատերազմեան շրջանին հետ բաղդատելով քարիւղի արտադրութիւնն առ նուազն 40 առ հարիւր անկում արձանագրած է:

ՔԱՐԻԻՂԸ ԻՆՋՊԷՄ ԿԸ ՁՏՈՒԻ, ԿԸ ՓՈՈԱԴՐՈՒԻ ԵՒ ԿԸ ԾԱՆՈՒԻ

Մեծ մասամբ քարիւղը կը ծախուի փոքր եւ մասնաւոր սեփականութիւններու պատկանող գտաւորաններու ինքնասպասարկող գործառնութիւններու միջոցով, որոնք կը գործեն հիւսիս արեւելեան Սուրիոյ քարիւղահան հորերու հողատարածքին մօտ: Այդ ձեռնարկը բանեցնողները ոչ մէկ առնչութիւն չունին իսլամական պետութեան հետ: Անոնք նաւթահորերէն հոմ քարիւղն առնելով կը գտնեն եւ ապա կը վաճառեն սեւ շուկայի մէջ: Զուտ տեղաբնակ մարդիկ են, որոնց կեանքի պայմանները հիմնովին ջնջուած են կռիւներու պատճառով: Այս քաղաքայինները բանալի անձեր են, որոնք իսլամական պետութեան համար քարիւղը կը գտնեն եւ կը փոխադրեն:

Արտադրուած քարիւղի մեծ մասը ներքին շուկայի սպառման համար է եւ երբեք արտաքին շուկայ չի հասնիր, նաեւ չի հասնիր ընդդիմադիր այլ խմբակներու կամ սուրիական կառավարութեան: Սակայն, տեղեկութիւններ կան, որոնք կը բացայայտեն որ քարիւղի մէկ մասը որ կ'արտածուի իսլամամ պետութեան հակաշռին ներքեւ գտնուող շրջանէն կը հասնի միւսեւ Յորդանան եւ Թուրքիա:

Դաշնակից ոյժերը նրեկայիս թիրախ ընտրած են վերոյիշեալ շրջանները: Փենթակոնի համաձայն անցնող երկու շաբաթներու ընթացքին իսլամական պետութեան շրջանգիծէն ներս փճացուած են աւելի քան 300 քարիւղատար փոխադրակառքեր:

Անցեալ Հինգշաբթի Օմարի

ՀԱՅ ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆՈՒՄ



Նոյեմբերի 1-ի ընտրութիւններով Թուրքիայի մեծ ազգային ժողովի (ԹԱՄԺ) կազմի մէջ ընդգրկուած հայ պատգամաւորներին աշխատանքին հետեւելու եւ համայնքի սպասելիքների մասին նրանց տեղեկացնելու համար մոնիտորինգի խումբ է ստեղծուել:

Այս նախաձեռնութեան հեղինակ Բոյաջըզլի Սուրբ Երից Մանկաց եկեղեցու հիմնադրամի նախագահ Նազարէթ Օզսահակեանը նշել է, որ այս նախագիծն իրականացնելու համար ԱՄՆ-ի Կոնգրեսի մոնիտորինգի խմբերից է ոգեշնչուել: Օզսահակեանն ասաց. «Մոնիտորինգի խումբը ստեղծուեց այն բանից յետոյ, երբ երեք պատգամաւորներն էլ ընդունեցին այս ծրագրին իրենց մասնակցութիւնը: Կարծում եմ, որ այս խումբը պատգամաւորների եւ հասարակութեան միջեւ երկխօսութեան եւ համակարգման տեսանկիւնից շատ օգտակար է լինելու»:

Թուրքական խորհրդարանի հայ պատգամաւորներ Կարօ Պալլանի, Սելինա Դողանի եւ Մարգար Եսայեանի աշխատանքները հետեւելու նպատակով ստեղծուած այս խմբին կարող էք անդամագրուել «hay-vekwatch-subscribe@yahoo.com» հասցէին էլեկտրոնային նամակ ուղարկելով:

Խմբում սկզբում երգման արարողութեան եւ խորհրդարանի նա-

խարարի ընտրութեան մասին է տեղեկութիւններ տարածուել, իսկ ԹԱՄԺ-ի աշխատանքները սկսելուց յետոյ, պատգամաւորներին դպրոցների «առեւտրային կազմակերպութիւն» համարուելու հարցի շուրջ նախաձեռնութիւններով հանդէս գալու պահանջներ են ներկայացուել:

Օզսահակեանը նշել է, որ պատգամաւորները կարող են խմբի միջոցով հետեւել եւ տեղեկանալ հասարակութեան սպասելիքներին: Նա խմբում գրառում է արել. «Փոքրամասնութիւնների հինադրամներն արդէն երեք տարի է ղեկավար խորհրդի ընտրութիւններ չեն կարողանում անցկացնել: Զեղեալ յայտարարուած ընտրութեան կանոնակարգը երեք տարի է չի թարմացուած: Սահմանադրութեան համաձայն սա յանցագործութիւն է: Ակնկալում ենք մեր պատգամաւորների օգնութիւնը: Խնդրում եմ, խորհրդարանում քայլեր ձեռնարկէք այս թեմայի շուրջ»:

Օզսահակեանը նշեց. «Առաջիկայ միայն Սելինա Դողանից ենք պատասխան ստանում: Առաջիկայ օրերին մեր միւս պատգամաւորներն էլ են սկսելու խումբն ակտիւօրէն օգտագործել: Շատ կարեւոր է, որ երեք պատգամաւորներն էլ իրենց համաձայնութիւնն են տուել այս նախաձեռնութեանը»:

«Ակօս»

նաւթահորերը յարձակման ենթարկուեցան բրիտանական օդուժի կողմէ: Կը կարծուի թէ օրական 2էն 3 միլիոն տոլարի եկամուտ մը կ'ապահովուէր, սակայն ռուսական ռմբակոծումներէն ետք այս գումարը կէսի իջաւ: Կ'ըսուի թէ 2014 թուականին իսլամական պետութիւնը 800 միլիոն տոլարի շահ ունեցած է: Արդարեւ Տահէշը իրաքեան եւ սուրիական քարիւղը Թուրքիոյ սեւ շուկային մէջ կը վաճառէ կէս գինով:

Թուրքիոյ կողմէ ռուսական

սաւառնակին վրայ եղած յարձակումէն ետք կ'ըսուի թէ Թրքական կառավարական շրջանակներ առնչութիւն ունին քարիւղային գործարքին հետ: Սուրիոյ քրտական Ռոժաւա շրջանի ուժանիւթի պատասխանատու Սալման Խալաֆի համաձայն Տահէշի միակ բաց սահմանը Թուրքիան է: Իսկ Իրաքի ուժանիւթի նախարարի խօսնակ Ասիմ Ժիհատի համաձայն իսլամական պետութիւնը չի կրնար առանձին գործել:

Քաղեց՝ Գ.Մ.

**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909

**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
*More locations and more ways to service your insurance and financial needs*

6300 Wilshire Blvd. Suite 1900  
Los Angeles, CA 90048

805 East Broadway  
Glendale, CA 91205

300 N. Lake Ave. Suite 500  
Pasadena, CA 91101

• Life Insurance

• Health Insurance

• Group & Individual

• Long Term Care

• Disability

• Estate Planning

• Will & Living Trust

• Full Annual Review

• Mortgage Protection

• College Planning

• Workman's Compensation

• Employee Benefits

• Annuity

• IRA

• 401K & 403B

**Seniors 65 & Up** Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրութիւնը Աճիրաժեղս է  
*Coverage & Protection should be on the top of your priority list.*



**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՃԱՆՉՑԱԾ  
ԶԱՐԱԲՈԼՈՒՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ Է ԴԱՆԻԱԿԱՆ  
ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵԻՆ**



Հայոց Ֆեդասպանութիւնը ճանչցած թուրք հրապարակիչ Ռա-կրփ Ջարաքոլուն արժանացած է Դանիալի PL հիմնադրամի խաղաղութեան պարգեւին: Այս մասին, ըստ Armen-press.am-ի, յայտնած է թրքական DemokratHaber կայքը՝ նշելով, որ պարգեւը Դեկտեմբեր 10-ին Ջարաքոլուն պիտի յանձնէ PL հիմնադրամի նախագահ Փոլ Սոկաարտը: PL հիմնադրամի խաղաղութեան պարգեւը Ռաւրփ Ջարաքոլուն կը յանձնուի մտքի եւ արտայայտուելու ազատութեան եւ մարդու իրաւունքներու բնագաւառներուն մէջ անոր ցուցաբերած արտակարգ ջանքերուն շնորհիւ:

PL Հիմնադրամի Խաղաղութեան պարգևեր կր տրուի ՄԱԿ-ի

Համամարդկային իրաւունքներու  
յայտարարագրի ծիրին մէջ ոչ  
բռնութեան ճանապարհով ժողովր-  
դավարութեան համար պայքարող  
մարդոց եւ կազմակերպութիւննե-  
րուն:

**Ռազմի Զարաքույուն 2005**  
 Թուականին ստացած էր նաեւ Նոր-  
 վեկիայի գրողներու միութեան եւ  
 Նորվեկիայի մշակոյթի նախարա-  
 րութեան կողմէ տրուող «Արտա-  
 յայտուելու ազատութեան պար-  
 գեւ»-ը:

**Ռաիլը Զարաքյուհին Հայոց  
Ցեղասպանութեան մասին հրատա-  
րակած է բազմաթիւ գիրքեր: Ան  
քանի մը անգամ այցելած է Հայաս-  
տան եւ Ցեղասպանութեան յուշա-  
համալիր:**

ԱՆԳԱՐԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ՎԻՐԱԴՈՐԵԼՈՒՆ  
ՀԱՄԱՐ ՀԱՅԿՕ ՊԱՂՏԱՏԸ ԴԱՏԱՐԱՆԸ  
ՄԵՂԱԴՈՐ ՃԱՆՉՑԱԾ Է



**Թրքական դատարանը Անգա-  
րայի քաղաքապետ Մելիհ Կեօքչեքը  
վիրավորելու մեղադրանքով 1160  
լիրա (400 տոլար) տուգանք  
վճարելու որոշում կայացուցած է  
պոլսահայ յայտնի լրագրող Հայկո  
Պաղտատի դեմ:**


Ըստ News.am-ի՝ Թրքական Samanyolu կայքը կը փոխանցէ, որ Հայկո Պաղտատի փաստաբանը դատարանին մէջ շէշտած է, որ Անգարայի քաղաքապետը միշտ իրեն տհաճ մարդոց վերաբերելու համար զանոնք «հայ» անուանած է, որուն ի պատասխան Հայկո Պաղտատ Անգարայի քաղաքապետը «զգուշի» անուանած է:

Սակայն դատարանը որոշած է, որ Հայկո Պաղտատը դիտա-  
ւորեալ վիրաւորած է Անգարայի  
քաղաքապետը՝ նշանակելով 1160  
յիրա տուգանք:

Կրկին նույն նիւթով, բայց  
Անգարայի քաղաքապետին կողմէ

**ՄՈՒՐԱՏ ՊԵԼԿԷ.**  
**ՍԵՒ ՕՐԵՐ ԿԸ ՄՊԱՍԵՆ ՍԵՋԻ**

Թուրքիա-  
(«Թուտէյզ  
Ձաման»- Պոլիս)  
Ձախ թեքումներ  
ունեցող Մուրատ  
Պէլլէն «Today's  
Zaman»-ին իր  
տուած հարցա-  
զրոյցին ընթաց-  
քին յայտարարած  
է, որ ինք չի  
հաւատար, որ  
թրքական հասրա-  
կութիւնը ժողո-  
վրդավարական  
մշակոյթ ունի, եւ  
հետեւեալը դեռ



Ժամանակ պէտք է, մինչև եւ որ իսկական ժողովրդավարութիւնը թուրքիա հասնի: Ան նշած է նաեւ, որ ինք կ'ենթադրէ, որ սեւ օրեր կը սպասեն թուրքիոյ, եւ այդ մէկը բնական երեւոյթ է երկար տարիներ խնամակալ իշխութեան ներքոյ ապրող հասարակութեան մը համար, չնայած ան համոզուած է, որ ընկերութիւնը դուրս պիտի գայ այս վիճակէն, եւ ճամբայ պիտի հարթէ ժողովրդավարութեան առջեւ:

Անդրադառնալով Թուրքիոյ մէջ վերջերս արձանագրուած դէպքերուն ան ըսած է, «Սովորական դարձած է արդէն, արթննալ նոր ցաւալի լուրերու վրայ՝ Չարդեր, ձերքակալութիւն, մահապատիժներու: Վերջերս, Տիարպէքիւրի իրաւաբաններու ընկերակցութեան նախագահը՝ Թահիր էլէիւն սպաննուած է, անկէ առաջ Թուրքիոյ երկու ամենակարեւոր յրազրողներէ՝

Ճան Տիւնտար եւ Էրտէմ Կիւլ, ձերբակալուած են, ներկայիս, մեր դիւանագիտական յարաբերութիւնները Ռուսիոյ հետ փլուզման եզրին հասած են, եւ ասոնք միայն նախորդ շաբաթներու գլխաւոր պատահարներն են: Ըստ երեւոյթին մենք սխալ ուղղութեամբ կ'երթանք եւ տեղական եւ միջազգային գետնի վրայ»:

Պէտէկէ յայտնած է, թէ ինք չի հաւատար, որ Թուրքիոյ ընկերութիւնը ժողովրդավարական մշակոյթ ունի, այս ուղղութեամբ, ան նշած է նաեւ , թէ Թուրքիոյ բնակչութեան մեծամասնութիւնը կը մտածէ ոչ թէ՝ սկզբունքային, այլ անձանական շահերու տեսանկիւնէ:

Զրույցի վերջաւորութեան Պէլէկէ նշած է, որ պէտք է տեսնել այն իրականութիւնը, որ մեզի կը պակսի եւ այդ մէկը Թուրքիոյ ժողովրդավարական համակարգն է:

**ՀԲՄ ՍԱԹԱՄԻԱՆ**  
ԹԱՏԵՐԱԽՈՒՄ  
AGBU SATAMIAN THEATRE GROUP

Կը ներկայացնե՝

# Դրամը Ինչե՛ր Կ'ընէ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԵԿ ԱՐԱՐՈՎ

Հեղինակ՝ ՌԷՅ ԳՈՒՆԻ      Բեմադրիչ՝ ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԻԱՆ



**Յունուար 9 - 10 - 16 - 17, 2016**  
Հ.Բ.Ը.Մ. Վաչէ եւ Թամար Մանուկեան Կեդրոն  
2495 E. Mountain Street, Pasadena, CA 91104

**Յունուար 24 - 30 - 31, 2016**  
Հ.Բ.Ը.Մ. Մանուկեան-Տեմիրճեան Վարժարան  
6844 Oakdale Avenue, Canoga Park, CA 91306

Հաճաք օրերը ժամը 8:00-ին / Կիրակի օրերը ժամը 6:00-ին

Տոմսերը կարելի է ապահովել՝  
Հ.Բ.Ը.Մ. Ի ԳՐԱՍՏԵՆԱԿԸ (626) 794-7942  
ՊԵՐՏ ԳՐԱՏՈՒՆ (818) 244-3830  
ԱՊՐԻԼ ԳՐԱՏՈՒՆ (818) 243-4112  
[ITSMYSEAT.COM/FUNNYMONEY](http://ITSMYSEAT.COM/FUNNYMONEY)

Մուտքի նուէր \$25





ԼԻԲԱՆԱՆ

«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵՆԵՆ ՎԵՐԱՊՐԱԾ՝ ՈՒՐՈՒԿՈՒԷՅԻ ՀԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ» ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Լիբանանահայ մտաւորական ընտրանին, հայ գաղթօճախներու ապագայով մտահոգ ընթերցողներ, հայրենասէրներ, ունկնդիրներ հաւաքուած էին Ձորեքշաբթի 2 Դեկտեմբեր 2015-ի երեկոյեան, Նոր Հաճնոյ Հ.Կ.Բ.Մ.-ի դարմանատան սրահին մէջ, ներկայ ըլլալու շահեկան դասախօսութեան մը:

Հայոց Յեղասպանութենէն վերապրած, գլխաւորաբար հայկական Կիլիկիայէն եւ Ալեքսանտրէթի «Մանճագ»-էն անցեալ դարու 20-ական թուականներուն, հեռաւոր Ուրուկուէյի ափերը ապաստանած հայորդիներու մասին էր, որ գեկուցեցին լրագրող Համօ Մոսկոֆեան եւ Տոքթ. Էտի Ռազուպեան:



2014-ին ապրիլեան ցեղասպանութեան ոգեկոչման օրերուն, որպէս «Դիտակ» հեղինակաւոր ամսագրի թղթակիցներ՝ անոնք այցելեցին Մոնթեվիտէօ եւ ժամանման առաջին երեկոյին իսկ դասախօսութեամբ հանդէս եկան Ուրուկուէյի մայրաքաղաքի, Ս.Դ.Հնչակեան Կուսակցութեան կեդրոնին մէջ (Սանթրօ), կազմակերպութեամբ նուիրեալ հայրենասէր Տիէկօ Գարամանուկեանի եւ վաղամեռիկ Տոքթ. Մարսէլ Քէօշկերեանի:

Երեկոյին բացումը կատարեց «Արարատ» օրաթերթի տնօրէնուհի Տիկ. Անի Սարաֆեան Եփրեմեան, որ ներկաներուն ծանօթացուց օրաթերթի կատարած աշխատանքները, եւ յիշեցուց թէ այս հանդիպումը տարեշրջանի առաջին հանդիպումն է եւ խոստացաւ թէ պիտի շարունակուին նման հանդիպումներ տարուան ընթացքին: Ապա ան նշեց, թէ մենք վերապրած ժողովուրդի մը գաւազներն ենք եւ աշխարհի չորս անկիւններուն մէջ արմատներ ձգած ենք, ստեղծած ենք համայնքներ եւ այսօրուան դասախօսութիւնը կը վերաբերի այդ համայնքներէն, Ուրուկուէյի հայութեան:

Ան, դասախօսութեան մասնակից հիւրերը ներկաներուն ծանօթացնելէ ետք, բեմ հրաւրեց Տոքթ. Էտի Ռազուպեանը, որ ներկայացուց իր տպաւորութիւնը այդ հիւրընկալ «դրախտերկիր» Ուրուկուէյի մասին: Զեկուցեց այնտեղ ապրող բնակչութեան եւ հայու-

